


ՊՐ. ՃՕՆ ՖՈՍԹԵՐ ՏԱԼԸՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՐԵՔ ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԵՏԵՐՈՒՆ



14 Մայիս 1953ին, Ամերիկայի արտաքին գործոց նախարար, Պ. Տալլս, Իսրայելին Յորդանան անցնելու միջոցին, ուզեց հանդիպում մը ունենալ Քրիստոնեայ երեք զլխաւոր Յարամուսիւթեանց, Յունաց, Լասինաց եւ Հայոց ներկայացուցիչներուն եւ կառավարական բարձրասիւնան պատեօնասարներուն հետ:

Պ. Տալլս իր գոհունակութիւնը յայտնեց, գտնուած ըլլալուն համար Յուսադէմի նման դարաւոր ու սրբազան քաղաքի մը մէջ, եւ

ուրախութիւնը՝ հանդիպած ըլլալուն համար անոր հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներուն: Ըսաւ թէ ինք կը հաւատայ խաղաղութեան բարիքին եւ արդարութեան յաղթանակին, եւ թէ այս սրբազան քաղաքին մէջ մարդ աւելի հակամէտ է նման զգացումներով լեցուելու:

Կես ժամուան տեսակցութեան մը յետոյ, բոլոր ներկաները մի առ մի ողջունելի վերջ, Ամման մեկնեցաւ:

ՎԱՍՆ ԲԱՐԳԱԻԱՃՄԱՆ “ՍԻՈՆ”Ի

Կ. Պոլսէն, Մեծայարգ Տիար Գուրգէն Հանճան վասն բարգաւաճման «Սիոն»ի կը նուիրէ 5250 Ճիւս:

Կը յայտնենք մեր ջերմագին շնորհակալութիւնները յարգելի նուիրատուն:

Վարչութիւն «Սիոն»ի